

ԱՂԱՃԱՆԵԱՆ ԿԱՐԴԻՆԱԼԻՆ

ԿԵԱՆՔԸ ՈՒ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԵՒ ԿԱՐԴԻՆԱԼԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՆՈՒՆԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

ՈՒ ԻՐԱԽԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

ԻՐԱԿԻՆ օր մ'էր, 23 Դեկտ. 1945, երբ ի Հռոմ Գերերջ. Տէր Գրեգոր-Պետրոս ԺԵ ԱՂԱՃԱՆԵԱՆ Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ, եկեղեցական պաշտամունքէ մը վերջ իր բնակարանը վերադարձած (Լեւոնեան վարժարանը), կը հետեւէր իր սովորական օրակարգին, ժամը 13-ին նշմարեցինք որ վատիկանի բարձրաստիճան պաշտօնեաներէն մէկը հեւ ի հեւ կը բարձրանար վարժարանի սանդուխներէն, հարցընելով թէ տո՞ւնն էր Աղաճանեան Կաթողիկոսը: Յետոյ իմացանք որ անոր յանձնած է, Ս. Պապին Քարտուղարութեան կողմէն հետեւեալ տոմարը.

SEGRETERIA DI STATO
DI SUA SANTITÀ

Dal Vaticano,
23 Dicembre 1945

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԱՌԻՒՆ Կատիկամ,
Ն. ՍՐԲՈՒԹԵԱՆ 23 Դեկտեմբեր 1945

Eccellenza Reverendissima,

Սրճ. Գերապայծառ Տէր,

Sono molto lieto ed onorato di pre-
venirLa che questa sera domenica l'«Os-
servatore Romano» annuncia che il
Santo Padre, nel Concistoro Segreto del
giorno 18 Febbraio p. v., si degnerà
elevare l'Eccellenza Vostra Reveren-
dissima alla Sacra Porpora.

Voglia accogliere fin d'ora le mie
più vive felicitazioni.

Chino al bacio del Sacro Anello,
con sensi di profonda venerazione mi
dichiaro di

Vostra Eccellenza Reverendissima
devotissimo servitore
G. BATTISTA MONTINI
Sostituto

A Sua Eccellenza Reverendissima
Monsignor Gregorio-Pietro XV. Agagianian
Patriarca di Cilicia degli Armeni
Roma

Գերերջանիկ Կաթողիկոսը որ պատրաստուէր դէպ ի իր Աթոռը վերա-
դառնալ ի Պէյրութ, անակնկալի մը առջեւ գտաւ ինքզինքը: Պիոս ԺԵ, անթա-
փանցելի իր խորհուրդներուն մէջ, կը կոչէր Արեւելքի այս ընտիր Պատրիարքը,
այս երկրորդը յետ Անտիոքի Ասորոց Պատրիարքին վսեմ. Կարդ. Թափուռիի,

Մեծապէս ուրախ եմ և պատիւ կը համա-
րիմ ինձի՝ տեղեկացնելու Ձեզի, որ այս իրի-
կուն, Կիրակի, «l'Osservatore Romano»
թերթը կը ծանուցանէ թէ Ս. Հայրը՝ մեր-
ձաւոր 18 Փետրուարի Գաղտնի Համաժողովին
մէջ, պիտի հաճի բարձրացնել Ս. Միրանիի
Ձեր Արհիպապառի Գերապայծառութիւնը:

Հաճեցէք ընդունիլ այժմէն իմ ամենաշնորհ
շնորհաւորութիւնները:

Կը խոնարհիմ խորին յարգանքով ի համ-
բոյր Ս. Մատանիի, և կը խոստովանիմ
զիս

Ձեր Արհիպապառի Գերապայծառութեան
անձնուէր ծառայ

Յ. ՄԿՐՏԻՉ ՄՈՆԴԻՆԻ
Փոխանորդ

Ա. Արհիպապառի Գերապայծառ Տէր
Արհ. Գրեգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեան
Պատրիարք Կիլիկիոյ Հայոց
Հռոմ.

անդամակցելու իր Ծերակոյտին: Որքան ալ յանկարծադէպ կոչ, Աղաճանեան
Կաթողիկոսը չէր կրնար բայց եթէ հաւանիլ համեստօրէն: Մերժել Սրբ. Պապէն
հասած հրաւեր մը մօտէն մասնակցելու իր հոգեւորն, պատասխանատուութիւն-
ներուն, ու իրեն աջակցելու: Գեղեցիկ էր տեսնել մեզի Աղաճանեան Կաթողի-
կոսը, որ խորապէս գիտակից իր Ազգին կրօնական անթիւ կարօտութիւններուն
կ'ըսէր երբեմն թէ տրամադիր է ցածնալու իր Կաթողիկոսական Գահին բար-
ձունքէն և յօժարակամ բազմելու Հայ մանկաւոյն երամին մէջ հեգել տալու
համար անոնց Քրիստոնէական Վարդապետութեան այբբենարանը. իսկ այսօր
կը հրաւիրուէր ան Ընդհ. Եկեղեցւոյ Հովուապետէն մաս կազմելու Հռոմ.
Ծերակոյտին:

* * *

Ո՞վ է Աղաճանեան Կաթողիկոսը, և ի՞նչ կը նշանակէ Հայերու համար
Անոր ամբարձումը Կարդինալական պատուին:

Ղազարոս Աղաճանեան ծնաւ Ախալցխա 1895, 18 Սեպտ.ին: Տասնմէկ տա-
րեկան (1906-ին) հասնելով Հռոմ՝ մտաւ Ուրբանեան Միջազգ. Ժառանգաւորաց
Վարժարանը, ուր տասնամեայ փայլուն դասընթացքէն վերջ, 1916-ին ամառը
լիաքուէ ստացաւ Իմաստասիրութեան, Աստուածաբանութեան վարդապետական
վկայականները, որոնց վրայ աւելցուց միամեայ շրջանով՝ նաեւ Կանոնագիտու-
թեանն ալ, ասով ամբողջացնելով եկեղեցական ուսումներու մէջ իր լիակատար
թեանն ալ, ասով ամբողջացնելով եկեղեցական ուսումներու մէջ իր լիակատար
թեանն ալ, 1917 Դեկտ. 23-ին քահանայ օծուեցաւ. 1919-ի Յուլիսին մեկնեցաւ
զարգացումը: 1917 Դեկտ. 23-ին քահանայ օծուեցաւ. 1919-ի Յուլիսին մեկնեցաւ
Թիֆլիս, ուր վեցամսեայ փոխ-ժողովրդապետութենէ ետք՝ եղաւ ժողովրդապետ
Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն: Հիմեց հոն Հ. Ալիշան անունով դպրոց մը, հայ
Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն: 1921-ի Սեպտ. 10-ին՝ կանչուելով իրր Փոխ-Տնօրէն Հռոմի
մանկաւոյն համար: 1921-ի Սեպտ. 10-ին՝ կանչուելով իրր Փոխ-Տնօրէն Հռոմի
Քահ. Լեւոնեան Հայ Վարժարանին, օժանդակելու իր յայտ սիրելի դաս-
տիարակին Գերայ. Տէր Սարգիս Տէր-Արրահամեանի, - նախկին Առաքելական
Կառավարիչ Կովկասու Հայ Կաթ. Համայնքին, - վերադարձաւ Հռոմ և զործեց
մինչեւ իր Կաթողիկոսութիւնը: Այն ինչ Հռոմ հասած, Ուրբանեան Համալսա-
րանը փութաց օգտագործել իր նախկին սանին բացառիկ կարողութիւնները,
վերապահելով անոր նախ իմաստասիրութեան, ապա իսկոյն Աստուածաբանու-
թեան իր նախասիրած դասաբեմը, ուսկից Ուսուցչաւ. Աղաճանեան Վարդապետը
անընդհատ, մինչեւ Կաթողիկոսութեան Գահը բարձրանալը (1937), կազմաւորեց
հազարաւոր երիտասարդ ժառանգաւորներու միաբերը ու հոգիները, իր օժու
կեանքով: Ուսուցչապետ Աղաճանեան Վարդապետ իր համալսարանական աշա-
կերտներուն հիացման առարկան էր:

Յաջորդաբար ստանձնեց նաեւ Սրբեւելեան Աստուածաբանութեան մասնա-
գիտական դասաբեմը, անուանուեցաւ Խորհրդական (1928-ին) Արեւելեան Ս.
Ժողովին, և Հռոմայ Եպիսկոպոսարանին մէջ քահանայութեան թեկնածուներուն
Քննիչը. հուսկ Լեւոնեան Վարժարանին տնօրէնը 1932-ին:
Իր երիտասարդ հասակին կարեւոր մէկ մասը թէեւ միջազգային միջավայրի
մը մէջ սահեցաւ, մասնաւորապէս ուսուցչական ասպարէզը, սակայն ի բնէ

աղնուական և արդարամիտ հոգի՝ սրտովը մնաց միշտ Հայութեան մէջ, որուն հանդէպ համակրանքի լայն և անկեղծ միջնորդ մը ստեղծելու գործածեց իր միջազգային յարաբերութիւնները: Աղաճանեան Վարդ. քանի՜ Հայերու կրնայ օրինակ տիպար դառնալ, որոնք այն ինչ քիչ մը յաջողութիւն կ'ունենան օտարութեան մէջ, զձուձ մտայնութեամբ մը կ'ամփնան իրենց ծագումէն: Նա զգաց միշտ թէ ինք Հայութեան մտաւոր ու հոգեկան կարօտութիւններուն համար էր, ուստի իր նորընծայ Քաջահայութեան դեռարուսիկ հասակէն յամուօրէն նուիրուեցաւ ընդարձակելու իր տոհմային հմտութեան պաշտօնը: Քանի քանի տարիներ մինչեւ կէս գիշերը կը հսկէր նա ազգային հին և արդի մատենագրութեան, քաղաքական ու եկեղեցական պատմութեան, հայրախօսութեան, ծիսագիտութեան նորանոր հատորներուն վրայ, անով հակալուրդ համար միջազգային հմտութեան յարաճուն նժարը: Այսպիսի տոկուն աշխատանքով զուգեց նա իր միջազգային ընդարձակ հմտութեան քով ազգային ոչ նուազ լայն հմտութիւն, միշտ աւելի կուռ դարբնուելով իր հայանպաստ կոչումին ուղղութեամբ:

Հետագային Ս. Աթուր յանձնեց իրեն կազմակերպել Զմեռան Միաբանութեան Պատրիարքական Կղերի Ժառանգաւորաց Վարժարանին շաղկապումը Հռոմայ Լեւոնեան Վարժարանին հետ, որուն համար երկրորդ անգամ մ'ալ այցելեց Լիբանանը յետ 1935-ի Յուլիան Եպիսկոպոս ձեռնադրուելու: Եւ հուլի 1937-ի Նոյ. 30-ին, Պէյրութի մէջ, Եպիսկոպոսական ընտրական Սիւն-հոգէն ելաւ Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ: Ծերունազարդ դիտապետները, որոնց մէջ չէին պակսիր նոյն իսկ հաւատքի Խոստովանողներ, 42-ամեայ Գերպ. Աղաճանեան Եպիսկոպոսին մէջ նշմարեցին իրենց փոքրիկ հօտին արժանաւոր Հովուապետը:

1937-1945ի ութամեայ Կաթողիկոսութեան ընթացքին, որուն վեցամեան համաշխարհիկ պատերազմի աղետներուն մէջ, Գերերջ. Աղաճանեան Կաթողիկոսը հիմնեց եկեղեցիներ, վարժարաններ, բացաւ նորանոր առաքելութիւններ, դառնալով առարկայ յատուկ ուշադրութեան Ընդհ. Եկեղեցւոյ Գիտապետին, որ պատուեց ինքը Կարդինալական պատիւով: Աղաճանեան աշակերտ, ժողովրդապետ, Փոխ-Տնօրէն, Տնօրէն, Ուսուցչապետ, Այցելու, ուր որ գտնուեցաւ սիրցուց ինքզինքը, վասն զի սիրեց միշտ ամէն բանէ առաջ և վեր զԱստուած, ճշմարտութիւնը, արդարութիւնը, հոգիները, իբր Քրիստոսի արեան գինը, և ձգտեցաւ անկեղծօրէն այս վսեմ գաղափարականը իրագործել իր մէջ և իր շուրջը: Հոս է գաղտնիքը իր յաջողութեան: Խոնարհամիտ, փափկանկատ ընկերութեան մէջ, կենցաղավարութեամբ յանկուցիչ, տարիներու ընթացքին իր հեղահամրոյր ակնարկովը ու խօսքովը՝ որոնք իր սիրող անկեղծաւոր սրտին ճառագայթումներն են, շահեցաւ զամէնքը: Գործի մէջ խոհուն, թափանցող, արդարակորով, և տոկուն, կ'ախորժի անաղմուկ գործունէութիւնը: Հովիւ մը որ խորապէս գիտակից է իր Հայրապետական կոչումին, հայրերոյ հայրաբնակ. իր ու առաքելական կեանքին ու գործունէութեան բնաբանն ընտրած է Եսայեայ մեսիական պատգամը՝ «Մի աղաղակեցի և մի վիճակեցի, և մի որ շռիջի արտաքոյ զբարբառ նորա. զեղեզն ճախջախեալ մի բեկցի, և զպատրոյզն առկայծեալ մի շիջուցի»: Գիտակից ըստով որ միայն անկեղծ սէրը ու արդարամիտ կորովը կը

վերաշինէ, կը խուսափի ուժէ և հեղինակութենէ: Ինքը բացասութիւն է վէճի, աղմուկ աղաղակի՝ և սիրող հոգիարափանց ու վերաշինող գործունէութեան: Կը սիրէ իրագործել Պիոս ԺԱ խորաշին Քաջահայրապետին նշանակալից մի յանձնարարութիւնը, խիստ թանկագին մեզի Հայերուս. «Չեզի պետք է Պատրիարք (un matriarca) մը մայրական սրտով», ինչպէս կը յիշատակէր 1945-ի Աւետիքի վերջին թիւը 9-12:

Այս համառօտիւ Գերերջ. Աղաճանեանի անձնական դիմագիծը:

Ի՞նչ կը նշանակէ մեզի Հայերուս համար իր Կարդինալական շքադրութիւնը: Առ այս հարկ է որ լուսարանենք մեր ընթերցողներուն թէ իրաւապէս ի՞նչ է Կարդինալութիւնը:

1. - ԾԱԳՈՒՄԸ ՀՈՌՄԷԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ԵՒ ԿԱՐԴԻՆԱԼՆԵՐՈՒ ԴԱՍԻՆ

Ինչպէս որ ամէն եպիսկոպոս, իր վիճակին միակ հովիւը, անյիշատակ դարերէ սկսեալ կը հովուէր ու կը կառավարէր իր վիճակը ուրոյն Առաջնորդարանի մը օգնութեամբ, Խորհուրդ Երիցանց (Presbyterium) կոչուած, այսպէս սովոր էին ընել նաեւ Հռոմայ Քաջահայրապետները, որոնք թէ իրենց եպիսկոպոսական մասնական թեմը և թէ Տիեզերական Եկեղեցին, որուն Գերագոյն Հովիւներն էին, կը կառավարէին իրենց Presbyterium-ի օգնութեամբ:

Արեւմտեքի մէջ նախնական դարերէն եպիսկոպոսանիստ եկեղեցին (Ecclesia Cathedralis), այս է Կարդինալի կամ Մայր Եկեղեցին, ինչպէս նաեւ թեմին միւս զիսաւոր եկեղեցիները, թէ Հռոմ և թէ այլուր, կը կոչուէին Դիսի-ները (Cardo, սեռ. Cardinis) նմանութեամբ՝ ամբողջ թեմին մէջ իրենց կատարած դերին՝ ինչպէս կը կատարեն ծիսիները դրան մը շարժման համար: Միեւնոյն նմանութեամբ նաեւ այն Քախանները, Սարկազանները, ու Կրդիկոսները որ յիշեալ եկեղեցիներու սպասարկութեան տետրին մէջ արձանագրուած էին, կուչուեցան Կարդինալը (Cardinales) այս է Գիսաւորը:

Նոյն ինքն եպիսկոպոսը յորընչուեցաւ Cardinalis: Աստի կը ծագի նաեւ incardinatio եկեղեցական իրաւագիտութեան լատիներէն եզրը, որ կը նշանակէ Կղերիկոսի մը կանոնական արձանագրութիւնը և անգամակցութիւնը Եկեղեցւոյ մը կամ թեմի մը:

Այսպէս ալ Հռոմայ 25 եկեղեցիներուն կամ Տիտղոսներուն (Tituli) որոնք մկրտարան ունէին, և եօթը Սարկազարաններուն (Diaconiae) կղերը, քահանաները և սարկազանները կոչուեցան Կարդինալը, որ է Գիսաւորը, և ասոնք կը ներկայացնէին Պապին Առաջնորդարանը, այսինքն Խորհուրդ Երիցանցը (Presbyterium) կամ Խորհրդարանը:

Եօթներորդ դարէն արդէն կը յիշատակուին Կարդինալ Քախանայր և Սարկազանը Հռոմէական Եկեղեցւոյ: Արեւմտեք գարուն պաշտօն մը դարձած էր այս տիտղոսը, վերապահուած եպիսկոպոսանիստ Եկեղեցւոյ կղերին միայն:

Եկեղեցական կարեւորագոյն հարցերուն լուծման համար Պապերը սովոր էին հրաւիրել ժողովի նաեւ մերձաւոր վիճակներու (որոնք էին Հռոմայ արուարձանները) եպիսկոպոսները, իբր իրենց Մետրապոլիտական Քահին կապուած ձանները) եպիսկոպոսները, իբր իրենց Մետրապոլիտական Քահին կապուած եպիսկոպոսներ: Այս՝ լիուր կը համապատասխանէր եկեղեցական վաղեմի կա-

տկար անհատի մը իշխանութեան ենթարկումի այս իրականութեան մէջ, չեն կրնար չնշարել բան մը որ կը գլխի կ'անցնի երկրաւոր արժէքները:

Գործնականին մէջ սակայն, Պապերը որ չեն հանդուրժեր նմանօրինակ ոչ մի միջամտութիւն, խիստ խոհականութեամբ կ'ընթանան Կարգինալ անուանելու մէջ, ինչպէս նաեւ մեծապէս կը գնահատեն անոնց խորհուրդը և աջակցութիւնը Եկեղեցւոյ կառավարութեան համար: Բագմավէպ օրէնքներ ու սովորութիւններ որ ձեւացած են Եկեղեցւոյ դարաւոր կեանքի ընթացքին, խղճմտօրէն կը յարգեն, մարդկօրէն ձգտելով հասնիլ ճանչնալու լաւագոյն անձնաւորութիւնները Եկեղեցւոյ առօրեայ պէտքերուն համեմատ: Բագմավէպ ձիրքեր մտքի, կամքի, սրտի, խոհականութիւն, բարեպաշտութիւն հոգւոյ, եկեղեցական ուսումներու, մանաւանդ Ս. Գրքի, աստուածաբանութեան և կանոնադրութեան հմտութիւն, փորձառութիւն Եկեղեցական գործառնութիւններու, և կը քննէ զազանօրէն հաւաքուած տեղեկութիւններով պատկան մարմիններու ձեռքով, մինչեւ հասունցնէ ապահովագոյն համոզումը անձի մը ընդունակութեան և արժանաւորութեան շուրջ: Լատին Կանոնագրքի յօդ. 239-ը լաւ կը մասնաւորէ յիշեալ բարեմասնութիւններուն հոյը:

3. - ԿԱՐԳԻՆԱԼԱԿԱՆ ՊԱՍԽԱՆՈՒՄ ԻՐԱՆՈՒՄՔՆԵՐԸ

Կարգինալները այսօր իրենց եռամսան գասակարգով, եպիսկոպոս - քահանայ - սարկաւազ, այժմ ամէնքը քահանայական կարգին օծումով ճոխացած, կը ներկայացնեն եկեղեցական գերագոյն ճոխութիւնները կամ ազնուականութիւնը, և ի պաշտօնէ կը կազմեն Ս. Պապերու Երեսնորդը: Յիշուանց նկատուած են Քահանայապետին, որ Գլուխն է, իրր անդամները, որոնց մէջ կը տարածուի կերպով մը իր իշխանութեան մէկ մասը, և իրր այս՝ նախապատիւ են քան ուրիշ տիտղոսակիր եկեղեցականները, ու ժԱ-ԺԲ դարէն սկսեալ կը վայելեն յառաջագահութիւն ամէնուն վրայ:

Կարգինալական պատիւը զուտ եկեղեցական ծագում ունի իր բոլոր իրաւունքներով, և զուտ յեկեղեցական իրաւանց հիմնարկութիւն մ'է: Ոչ միայն աստուածային, այլ և ոչ իսկ առաքելական ծագում ունի: Այս տեսակէտէն ստորագրած է քան զեպիսկոպոսութիւն որ ուղղակի Քրիստոսէ հիմնարկուած է իբր հովուական իշխանութիւն: Գործնականի մէջ սակայն Կարգինալներու կէսէն աւելի արդէն Եպիսկոպոսներ են, ըլլալով Գահակալները Մետրապօլիտական կամ Արքեպիսկոպոսանիստ Աթոռներու, կամ ալ Հռոմայ Առաջնորդարանի Արուարձանային Քաղաքներու Եպիսկոպոս Կարդինալներ: Քաղաքական մարզին մէջ ամէնքը կը վայելեն իշխաններու հաւասար աստիճան և պատիւ:

Կարգինալներու Գասին մէջ Քահանայ-Կարդինալներու առաջինը հինէն կ'անուանուէր Առաքեղեց (Archipresbyter) յիշատակուած 499-ին: ԺԲ դարէն յետոյ կոչուեցաւ Առաջին Կարդինալ Քահանայից: Նմանապէս Սարկաւազ-Կարդինալներու Գլխաւորը Առաջ-Սարկաւազ, ժԳ դարէն վերջ Առաջին Կարդ. Սարկաւազներու: Առաքեղեց Կարդինալը Առաջադրուի Նոտարիէ հետ կը ստանձնէին քափոշը Աթոռի շրջանին Հռոմայ Եկեղեցւոյն գեկը: Երբոր Առաջաքահանային Եպիսկոպոսներն ալ ճոխացան Կարգինալի պատիւով, Գասին Առաջի կամ լաւ եպիսկոպոսները (Decanus) պատիւը անցաւ հնագոյն Կարդինալ Եպիսկոպոսին: Կարգեբէցը Հաւասարներու մէջ Առաջին մ'է (primus inter pares) և կը վայելէ յառաջագահութիւն միւսներուն վրայ՝ նախագահելով ամբողջ Գասուն:

Կարգինալներու Գասը, անկախաբար իւրաքանչիւրին վարած պաշտօնէն, հաւաքաբար առնուած կը կազմէ Եկեղեցական Մարմին մը, օժտուած իրաւական անձնաշարժքերով, որ ընդունակ է եկեղեցական իրաւասութեան, և զոր կը բանեցնէ, անխտորէն եպիսկոպոս-քահանայ-սարկաւազ Կարդինալը քուէի համարժէք իրաւունքով:

Իրաւունքներ ունին դասովի ինչպէս նաեւ անհատաբար: Թափոշը Աթոռին, այսինքն երբոր Պապը վախճանած է և նորը դեռ չէ ընտրուած, կը բանեցնեն Գասովի իրր Կաթողիկէ Եկեղեցւոյն յայտնի և ընդունուած Խորհրդարանը կամ Վարդապետարանը, նոր Պապի մը ընտրութեան և Տիեզերական Եկեղեցւոյ առժամեայ կառավարութեան իրաւունքը:

Այս շրջանին Կարգինալներու Գասին կ'անցնի, թէ Վատիկանի քաղաքական առժամանակեայ կառավարութիւնը, և թէ՛ ամբողջ Տիեզերական Եկեղեցւոյ եկեղեցական կառավարչները, թէ՛ և խիստ սահմանական չափով ու ծաւալով: Եպիսկոպոսներու մահով՝ Թափուր Աթոռներու շրջանին թեմական սովորական իրաւասութեան առ Տեղապահն անցնին, ու Պապերուն մահով՝ Եկեղեցւոյ Գերագոյն իշխանութեան՝ Կարգինալներու Գասին անցնին միջեւ չկայ հանգիստութիւն: Հոն կ'անցնի վախճանած եպիսկոպոսին սովորական իշխանութիւնը, թէ՛ և վերածուած, հոս ընդհակառակն առկա կը մնայ Եկեղեցւոյ Գերագոյն իշխանութիւնը՝ ցնոր ընտրութիւն Պետրոսի Յաջորդին: Կարգինալները ձեռննաւ են նութիւնը՝ ցնոր ընտրութիւն Պետրոսի Յաջորդին: Կարգինալները ձեռննաւ են գլխաւորապէս այս ընտրութեան, ի բաց առեալ եկեղեցական ուրիշ գործառնուած իշխաններու շուրջ խիստ սահմանափակ իրաւասութեան: Եկեղեցւոյ առկա այս իշխաններու շուրջ խիստ սահմանափակ իրաւասութեան ներկայապէս Պիոս Ժ-ի «*Vacante sede Apostolica*» 25 Գեկտ. 1904-ի Սահմանադրութեամբ, կոթող մը մարդկային վարչական խոհականութեան, ուր կը խտանայ քան դարերու եկեղեցական փորձառութիւնը: Հոգ ճշդուած է թէ ինչպէս Կարգինալներու Գասը ղեցական փորձառութիւնը: Հոգ ճշդուած է թէ ինչպէս Կարգինալներու Գասը իրաւասու չէ՝ ա) նորագոյն տրանսպորտները ղեկ օրէնքները կամ արտօնել, գ) նոր իրաւունքներուն շուրջ, բ) օրինադրել կամ չեղել օրէնքները կամ արտօնել, կամ Կարդինալներ ստեղծել, կամ այս պատուէն զրկուածները վերահաստատել կամ ընդունիլ ընտրական Խորհուրդին (Conclave) մէջ. կը մնան միայն Հռոմայ սեփական թեմին Աթոռակալութեան իշխանութիւնը, Հռոմէական Եկեղեցւոյ Սենկապետին (Camerarius), և Մեծագոյն Ապաշխարաւոր, որպէս զի հոգին ներու փրկութեան համար կարեւոր շնորհներուն մատակարարութիւնը պահ մըն ալ չզգարի:

Իսկ ի յոռքեան Աթոռին դասովի կ'օժանդակեն Կարդինալական Հաւաք ժողովներու (Consistorium) մէջ, եկեղեցական Գերագոյն Երեսնորդի հանգաձմանքով: Իսկ անհատաբար՝ Ս. Ժողովներու, Առեւտներու, Պաշտօնարաններու Մարմիններուն մէջ շարունակական կերպով ի սպաս գնելով իրենց ժամանակը, ձիրքերը, կեանքը՝ Ս. Պապերու հովուապետական իշխանութեան: Օրէնքը ճշդած է որոշ ղեպերը, ուր կրնան բանեցնել այս իշխանութիւնը, ըլլայ դասովի ըլլայ անհատաբար Ս. Ժողովներու մէջ:




Վսեմ. Ծիրանաւոր Հոգեւոր Տէրը.
Sua Em. il Card. Patriarca.

անուամբ Ս. Երրորդութեանն, զնեղով ի վերայ արժանաւոր գլխոյն սուրբ զԱջ Պետրոսի վարչամակաւ Քրիստոսի, և արարաք զսա Պատրիարք Հայոց Մեծաց: Զի ինքն և ամենայն աթոռաժառանգք սորա ինքնագործիւ եղիցին, յիշեանց եպիսկոպոսաց առնելով զձեռնադրոշիւն, առաջարկութեամբ իշխեանց քաղաւորին...»: Դեռ աւելի ունի առաաաձեռն գրուածքը. թէ Երուսաղէմի, Անտիոքայ և Ալեքսանդրիոյ Գահակալները իրենց Պատրիարքական իշխանութիւնը պիտի ստանան «կամօք և ընտրութեամբ Հայոց Հայրապետին... Զի զնա կարգեցար մեր գլխաւ փոխան և հրամանաւան ամենայն առիական միջնաշխարհիդ և յերս արեւոյ միջնէ ի դրունս Գրախոսին»: Միջին դարու այս անհարազատ ստեղծագործութեան յոյժ փառապանծ տեսլականը, յայտարար է անշուշտ Հոգեբանական ձգտումի մը Հոռմի

Գահին հեղինակութեամբը եւս աւելի քան իրականաւրի պայմաններով բարձրացնելու Հայ Գահը: Ինչ որ այն ժամանակի համար ձգտում մ'էր, համեստ իրականութիւն մը կը ստանար յանձին Գերերջ. և Վսեմաշուք Կարգ. Աղաճանեան Կաթողիկոսին, և իր անձին մէջ կը ներկայանային Քրիստոնեայ Արեւելքի երբեմնի այնքան փառապանծ Պատրիարքական Աթոռները համաշխարհական այս Համաժողովին մէջ, ուր գումարուած էին հինգ աշխարհամասերու ընտրելագոյն հոգեւոր Պետերը կամ Հովիւները: Հին տեսլականը այսպէս մարմին և իրականութիւն կը ստանար:

Պիոս ԺԲ Քահանայապետը իր 24 Դեկտեմբեր 1945-ի ձայնասփռուած



Վսեմ. Հոգեւոր Տէրը նկարուած ամբողջական փիլոնով, և ծիրանեգոյն գամեկաֆիլով:

Sua Em. il Patriarca col suo mantello intero e berretto orientale.

